



ՔՎԱԴՐՈՑԻԿԼԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ներկայումս մոտո- և քվադրոցիկլները դարձել են ռազմական գործողությունների տարբեր թատերաբեմերում գորքերի գործողությունների անփոխարինելի բաղադրիչ: Դրանց թվում հատուկ դեր են խաղում քվադրոցիկլները, որոնք օգտագործվում են անձնակազմի տեղափոխման, տարահանման և մատակարարման համար: Ունակ լինելով գործել հատված և բարդ տեղանքում, ինչն անհասանելի է մարդատար մեքենաներին, նրանք մեծացնում են ստորաբաժանումների արձագանքման արագությունը և ընդլայնում մանևրելու հնարավորությունները: Միննույն ժամանակ, քվադրոցիկլների վարորդներին անհրաժեշտ է համապատասխան վերապատրաստում, որը միշտ չէ, որ հնարավոր է նախապես: Ստորև բերված են մի շարք խորհուրդներ սկսնակների համար:

Մարտական գործողությունների ներկա պայմաններում բարձր անցունակությամբ շարժական մանևրային մոտոտրանսպորտային միջոցները դարձել են աշխատանքի անփոխարինելի բաղադրիչը: Եվ մոտոտրանսպորտային միջոցների ամբողջ բազմազանության մեջ առանձնահատուկ դեր են խաղում, իհարկե, քվադրոցիկլերը, որոնք կիրառվում են անձնակազմի տեղափոխման, տարահանման և մատակարարման համար: Քվադրոցիկլերը մեծացնում են ստորաբաժանումների արձագանքման արագությունը, ընդլայնում են մանևրելու տարբերակները, բայց ամենակարևորը, իրենց կայուն կառուցվածքի շնորհիվ, պահպանում են կառավարելիությունը անհավասար մակերևույթների վրա, ինչը թույլ է տալիս գործել ճանապարհներից դուրս:

Ընդ որում, որպեսզի քվադրոցիկները իսկապես ուժեղացնեն ստորաբաժանման հնարավորությունները, դրանց վարորդներին անհրաժեշտ է անցնել համապատասխան պատրաստություն, որը, անկեղծ ասած, միշտ չէ, որ կազմակերպվում է: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում տեղում սովորել, ինչպես ասում են «կոիր երկաթը, առանց դրամարկդի մոտից հեռանալու»:

Այսպես, քվադրոցիկի սկսնակ վարորդը, ով նախկինում չի օգտագործել քառանիվ ձի, հարթ մակերևույթի վրա առաջին փորձնական վազանցներից հետո, որի ընթացքում ընտելացել է քվադրոցիկի քաշին և մանևրելիությանը, անպայման պետք է փորձարկի սարքը ճանապարհից դուրս՝ տարբեր մատչելի պայմաններում:

Սակայն, նախքան ճանապարհից դուրս քվադրոցիկի փորձավարում սկսելը, ձեր գլխում պետք է ամրագրեք կոշտ տեղանքով երթևեկելու մի շարք նրբերանգներ.

- Պետք է հաշվի առնել, որ քվադրոցիկը նախատեսված չէ վիրաժների և շրջադարձերում կտրուկ թռիչքների համար, ինչը պայմանավորված է դրա (քվադրոցիկի) կառուցվածքով: Ծանրության կենտրոնն ավելի բարձր է, քան, օրինակ, սովորական մարդատար մեքենաներում: Կոշտ տեղանքով, կաշուն կամ սորուն գրունտում կտրուկ շրջադարձ կատարելու փորձերը կարող են հանգեցնել գլխիկոր շրջվելուն: Ուստի անհրաժեշտ է չափազանց զգույշ լինել և նվազեցնել արագությունը, Օրինակ՝ մանևրելու ընթացքում շարժման ուղղությունը փոխելիս:
- Քվադրոցիկի նկատմամբ վերահսկողությունը պահպանելու համար արագընթաց շրջադարձեր իրականացնելիս ոտքերը չպետք է հեռացվեն ոտնակներից, իսկ ծնկները պետք է ավելի ամուր սեղմվեն բաքին: Արագընթաց շրջադարձեր իրականացնելիս մարմնի քաշը պետք է արագ տեղաշարժել առաջ և ներս, որի համար արժե մի փոքր կանգնել նստատեղից: Բացի այդ, շրջադարձ մտնելու պահին կարող եք դեկի շարժմանը և քաշի փոխանցմանը զուգընթաց, ավելացնել գազի ոտնակի կարճ, կտրուկ «հարված»՝ թույլ տալով քվադրոցիկին «ետ վերադառնալ» մարմնի ներքո: Եթե շրջադարձի ժամանակ քվադրոցիկը սկսում է գետնից պոկել «ներքին» անիվները և փորձում է շրջվել, ապա անհրաժեշտ է միաժամանակ ավելի խորը թեքվել դեպի շրջադարձը, սահուն փակկել գազը և հնարավորության դեպքում ուղղել շարժման հետագիծը:
- Պետք է հիշել, որ քվադրոցիկները, որպես կանոն, նախատեսված են միջև 25 – 27 աստիճանի բարձրունքներ հաղթահարելու համար: Սակայն, եթե մարտական իրավիճակը պարտադրում է հաղթահարել նշվածից առավել կտրուկ բարձրացումներ ուղիղ գծով, ապա անհաժեշտ է մարմնի քաշը տեղափոխել առաջ և պահել նույն արագությունը՝ առանց կտրուկ և ինտենսիվ ցնցումների:

- Բարձունքից իջնելիս անհրաժեշտ է մարմնի քաշը տեղափոխել ամենագնացի հետևի մաս և ուղիղ պահել: Այս դեպքերում արագությունը չպետք է բարձր լինի, իսկ ոտքը պետք է մի փոքր սեղմի արգելակը:
- Սայթաքուն մակերեսների վրա, ինչպիսիք են սորուն խճաքարերը կամ սառցակալած եղանակին վարելիս նվազեցրեք արագությունը և խուսափեք կտրուկ, հանկարծական շրջադարձերից, որոնք կարող են սահք առաջացնել: Եթե իրավիճակը պահանջում է պահպանել բարձր արագություն, պատրաստ եղեք սահքի: Եթե դա տեղի ունենա, պտտեք ղեկը սահքի ուղղությամբ և սահուն, բայց արագ տեղափոխեք ձեր մարմնի քաշը առաջ: Երբեք մի սեղմեք արգելակները, եթե մեքենան սահում է: Նույն ընթացակարգը վերաբերում է նաև թաց ճանապարհներին:

➤ Ի թիվս այլ բաների, կարևոր է հասկանալ, որ քվադրոցիկլերի ստորաբաժանումների կիրառումը պահանջում է ոչ միայն պատշաճ կառավարման հմտություններ, այլև այդպիսի տեխնիկայի մարտավարական սահմանափակումների գիտակցում: Մարտական գործողությունների բազայի շրջանակներում քվադրոցիկլերը, ինչպես նաև այլ մոտոտրանսպորտային միջոցները պետք է օգտագործվեն՝ հաշվի առնելով հիմնական մարտավարական սկզբունքները: Անհրաժեշտ է անընդհատ փոխել երթուղիները, հաշվի առնել քվադրոցիկլերի կրողունակության սահմանափակումները, նվազագույնի հասցնել բաց տարածքներում գտնվելու ժամանակը, օգտագործել ռելիեֆը և բուսականությունը պաշտպանության և քողարկման համար:

Աղբյուրը՝ https://vk.com/wall-132159147_16751?ysclid=mor5fee5u8796514884